ՆՈՐ-ԴԱՐ

№ 72 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 25 Ապրիլի 1896 Հինգշաբթի 25 Ապրիլի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 72

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդողներ.— Մի անմիտ լուր։ Առևտրական դպրոցի կարիքը։ Ֆրանսիական սենատը։
Քրոնիկոն.—Կայսերական տօն։ «Ինչ է բարեկութիւն»։ Թոգակրութեան առթիւ։ Հանդէսներ Գանձակում։ Ներկայացուցիչներ թագադրութեան հանդէսին։ Սխալ լուր։ Տ. Դոլուխանեանի նամակը։ Տպագրական գործի ցուցահանդէս։ Ներկայացում հանդ. Մարտինեանի օգտին։ Շուշուց։ Փարարից։ Շամախուց։ Սաղիանից։ Նոր հրատարակութիւններ։ Շամախուց։
Մամուլի շուրջը։
Թղթակցութիւններ.— Նամակ Թիւրքիայից—Կ. Պոլիս. Նամակ Ֆրանսիայից—Պարիզ։
Քաղաքական.— Վերջին տեղեկութիւններ Թիւրքիայի գործերի մասին։ Անգլիա։ Պետական տագնապը Գերմանիայում։ Իտալիա։ Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Տեղեկատու.
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 23 ապրիլի, 1896 թ.

ՄԻ ԱՆՄԻՏ ԼՈՒՐ

Անգլիական «DailyNews» թերթը մի շատ հետաքրքիր լուր է հաղորդում, որով պարզւում է, թէ եղած գրութիւնից ինչ օգուտ են ուզում քաղել պապականութեան համար աշխատողները։

Պետերբուրգի «Նովոյէ Վրեմյա» թերթին նրա Լոնդոնի թղթակիցը հետևալով հաղորդում է.

«Daily News» թերթի ասելով միութեան մասին բանակցութիւններ են տեղի ունենում հայոց պատրիարք Իզմիրլեանի և Վատիկանի միջև. միջնորդը Վենետիկի Մխիթարեան ուխտի միաբան հայր Ալիշանն է։ Ս. Իզմիրլեանը աշխատում է, որ պապը նրան՝ բոլոր միացած (պապականութիւնն ընդունած) հայերի վրայ պատրիարք նշանակէ. և միքանի ուրիշ եպիսկոպոսներ իբր թէ համաձայնւում են միանալ այն յուսով, որ պապականութիւն ընդունող հայերին պապը կըհովանաւորէ։ Ֆրանսիայի միքանի նշանաւոր կարդինալներ խոստացել են Պապին, որ ֆրանսիական կառավարութիւնն էլ միացող-հայերին իր հովանաւորութեան տակ կընդունէ։ «Daily News»-ի թղթակիցը հայերին՝ մահմեդական դաժանալուց ազատելու միակ միջոցն՝ հայոց եկեղեցին հռովմէական եկեղեցու հետ միացումն է համարում»։

Անգլիական թերթի հաղորդած լուրը ամբողջապէս մէջ բերելով, աւելորդ ենք համարում հերքել այդ անմիտ և անհեթեթ լուրը։

Անմիտ և անհեթեթ ենք ասում, որովհետև մեր գործերին ծանօթը իսկը կըտեսնէ, որ դա մի անմիտ և անհեթեթ բան է։ Նախ, որ ս. Իզմիրլեանը Հռոմի հետ միանալու մասին չի կարող մտածել, երկրորդ՝ հայոց եկեղեցու գլուխը կաթողիկոսն է, որի մասին, ինչպէս և հայոց եկեղեցում տիրող կարգերի մասին շատ քիչ տեղեկութիւն ունեն «Daily News»-ի թղթակիցն և խմբագրութիւնը. երրորդ՝ եթէ կաթողիկոսն էլ այդպիսի բան մտածելու լինի, ժողովուրդը հօ խօսք չի կերել և կարելի բան է մեթէ գըչի մէկ ծայրով ամբողջ ժողովրդի սիրտը և զգացումները փոխել. չորրորդ՝ Հռոմի եկեղեցու հետ միանալով հայերը ոչ մի օգուտ չեն կարող ստանալ։

Անգլիական թերթի լուրը խիստ պէս մի անշնորհք արձագանք է Ազարեան և նրա համախոհների յայտնի ջանքերի…

Թիֆլիս, 24 ապրիլի, 1896 թ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՐԻՔԸ

«Նոր Դար»-ի անցեալ համարի Քրոնիկոնի բաժնում ընթերցողը, անշուշտ, կարդացած կլինի, որ ռուսական վաճառականական դասը բաւական խոշոր գումարներ է հանգանակել Ռուսիայի նշանաւոր վաճառաշահ քաղաքներում դրանց թւում և Թիֆլիսում առևտրական ուսումնարաններ բանալու և խնդրամատոյց է եղել պատշաճաւոր իշխանութեան այդ մասին նրա թոյլտւութիւնը ստանալու համար։

Այդ մի շատ ուրախալի մտադրութիւն է, որ նկատւում է վաճառականական դասի մէջ և նրա իրագործումը կարող է մեծ ծառայութիւն մատուցանել երկրի առևտրական գործին, որ համեմատութեամբ եւրոպականի շատ յետամնաց վիճակի մէջ է գտնւում։

Եթէ գիտութիւնների զանազան ճիւղերը մշակելու, քաղաքային և գիւղային տնտեսութիւնն ուսումնասիրելու ու զարգացնելու համար անհրաժեշտ է ուսման որոշ պատրաստութիւն ունենալ, նոյնքան անհրաժեշտ է և ունենալ առևտրական ուսումնարանական հաստատութիւններ։ Այդ տեսակ հաստատութիւնների նպատակը պէտք է լինի ծանօթացնել վաճառականութեան տեսակների, երկրի զանազան մասերի առաջ բերած արդիւնաբերութեան, նրանցից իւրաքանչիւրի ու ստացման կատարելագործութեան հասած լինելու հետ, և, մանաւանդ, ուսանել հաշւապահութեան տեսական և գործնական դասեր։

Թէ որքն գոյութիւն ունեցող և կամ նոր հաստատուելիք վաճառականական ուսումնարանների ինչ չափով կըշօշափեն վերոյիշեալ խնդիրները, որոնք անմիջական կապ ունեն որևիցէ երկրի վաճառականութեան զարգացման հետ,— դա կախւած է այդ հաստատութիւնների ծրագրից։

Սակայն, բաց մեզ, առևտրական դպրոցներն այն ժամանակ միայն իրենց իսկական նպատակին ծառայած կլինեն, երբ կըդրուեն գործնական հողի վրայ և իրենց բացը այդ ասպարէզի հետ կապող երիտասարդների առաջ կըբանան երկրի հարստութեան աղբիւրները, ընդարձակ տեղեկութիւններ կըտանեն երկրի թէ ներքին և թէ արտաքին առևտրականութեան վերաբերեալ նիւթերի վրայ։ Իսկ անուամբ ունենալ վաճառականական ուսումնարաններ և ուսանել միմիայն հաշւապահութեան վերաբերեալ հատուկտոր տեղեկութիւններ, – այդ շատ քիչ է։

Վաճառականութեան պատրաստուողը պէտք է ընդհանուր զարգացում ստանայ և նրա մտաւոր հորիզոնը պէտք է ընդարձակւի ամեն երկրի և նրանց բերքերի մասին կարևոր տեղեկութիւններ ստանալով և այդ ճիւղին նուիրուողը առանձնապէս պիտի սովորէ այն օժանդակիչ գիտութիւնները, որոնք անհրաժեշտ են նրան եւրոպական գաղափարով վաճառական դառնալու համար։ Բացի այդ օժանդակիչ գիտութիւններից, ինչպիսիք են աշխարհագրութիւնը, վաճառականութեան պատմութիւնը, և այլն, պէտք է սովորէ և եւրոպական միքանի լեզուներ և կարողանայ այդ լեզուներով թէ խօսել և թէ առևտրական թղթակցութիւններ կատարել։

Գալով մանաւանդ Թիֆլիսին, պէտք է ասել, որ դա լինելով ամբողջ Կովկասի առևտրական կենդրոնը, այդ կարգի բարձրագոյն ուսումնարանական հաստատութեան պէտքը վաղուց զգալի է։ Հէնց այդ պատճառով էլ արդէն սրանից չորս տարի առաջ տեղիս առևտրականների ժողովի մէջ արծարծուել է այդ խնդիրը և ցանկութիւն յայտնուել Թիֆլիսում վաճառականական միջնակարգ ուսումնարան հիմնել։

Ուստի շատ ցանկալի կլինէր, որ Կովկասի վաճառական դասը օգտուէր այդ յարմար առիթից և աշխատէր տարիներից ի վեր իր ունեցած մտադրութիւնը իրականացնել, և ոչ թէ բաւականանայ միմիայն թղթի վրայ որոշումներ կայացնելով ու ծրագիրներ կազմելով, ինչպէս որ եղել է կենսական կարևորութիւն ունեցող մեր ուրիշ բազմաթիւ խնդիրների վերաբերութեամբ։

Ժամանակն է արդէն գանգատութիւնը մի կողմ թողնելով, լրջօրէն մտածելու երկրի ընթացիկ պահանջների վրայ և օր առաջ ձեռք առնելու այն բոլոր միջոցները, որոնք պիտի նպաստեն բնութեան կողմից առատապէս օժտուած Կովկասի տնտեսական զարգացման ու յառաջադիմութեան։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՍԵՆԱՏԸ

(«Նոր-Դար»-ի Պարիզի թղթակցից)

Որքան որ սահմանադրական-միապետական և դաշնակցական-հանրապետական երկրների մէջ մի երկրորդ՝ բարձրագոյն օրէնսդրական մարմնի գոյութիւնը հասկանալի է, նոյնքան անհասկանալի և արտուղի (anomalie) է դառնում մի այդպիսի հաստատութիւն մի միաւորեալ հանրապետական երկրի մէջ՝ որպիսին է Ֆրանսիան։

Եթէ Ֆրանսիան իրօք հանրապետական-վեհապետական (souverain) երկիր լինէր, ապա նրա միակ հաշուառու և հաշուետու լրացուցիչ և միահեծան բերանը պիտի լինէր պատգամաւորների ժողովը։ Եթէ պատգամաւորների ժողովը (Chambre des députés) ազգային միահեծանութեան ամփոփումն ու բերանն է, ապա նրան հակակշռող մի այլ երկրորդական մարմնի գոյութիւնն աւելորդ և անտրամաբանական է դառնում։ Եթէ հանրաքուէով ընտրուող ժողովրդի անմիջական ներկայացուցիչների որոշումները կախումն պիտի ունենան սահմանափակ քուէի միջոցով ընտրուող միջակ և ոչ ժողովրդական ներկայացուցիչների տրամադրութիւնից, ապա այլևս ինչ ազգային միահեծանութիւն։ Ֆրանսիական սենատի գոյութիւնն ազգային միահեծանութեան և հանրապետական սկզբունքի տեսակէտից մի մարմնացած արտուղութիւն (anomalie) է։ Նա մի արհեստական (factice) հաստատութիւն է, որ իրօք ոչինչ չի ներկայացնում։ Quasi-ժողովրդական ծագում ունենալով հանդերձ, նա բուն ժողովրդական հաստատութիւն չէ, այլ ուղղուած է ընդդէմ ժողովրդի։ Սենատի այդ արտուղութեան դէմ սկզբից մինչև ցարդ մարտնչել են բոլոր ճշմարիտ հանրապետականները՝ սկսած արմատականների զանազան խմբերից մինչև ամենածայրագոյն ընկերվարականները։ Սրանք սենատի վրայ նայել են, և իրաւամբ, իբրև մի պատնէշի, ընդդէմ յառաջադիմութեան և ճշմարիտ հանրապետականութեան։ Սենատը սկզբից ի վեր ապահով թումբ է եղած արքայական-յետադիմականների և չափաւորական-պահպանականների բացառիկ շահերին։

Տեսականօրէն մի երկրորդ մարմնի գոյութիւնը սահմանադրական, և նոյն իսկ հանրապետական երկրների մէջ, շատ օրէնսգէտ-իրաւագէտներ անհրաժեշտ են համարում, պատճառ բերելով, որ երբ առաջին ժողովը զանազան տրպաւորութիւնների տակ սխալներ գործէ իր որոշումների մէջ, ապա երկրորդ ժողովը, համեմատաբար աւելի ձեռնհաս անդամներից բաղկացած, ժամանակ կունենայ աւելի սառնութեամբ խորհրդածել և այդպիսով առաջինի հապճեպով կատարած սխալները շտկել, ուղղել և կանոնաւորել։

Այս առթիւ էր, որ Ֆրանսիայի միջազգային իրաւագիտութեան ամենայայտնի պրոֆէսորներից մէկը հայերին անուանեց «[illegible]», որովհետև հայերն ես իրենց երկրի կազմակերպութեան համար գծագրած, ցանկացած էին երկու հաստատութիւն՝ վերին և ստորին խորհրդարան (Sénat et chambre des dèputés)։

Երկու խորհրդարանների գոյութեան խնդիրն այսօր պայքարի նիւթ է դարձած բոլոր պարլամենտական՝ ներկայացուցչական կազմակերպութիւն ունեցող երկիրներում։

Իսկ ինչոր վերաբերում է ֆրանսիական սենատին, ակներև է, որ նա ոչ թէ «[illegible]» մի խորհրդարան է, այլ մի որջ այն բոլոր կուսակցութեանց՝ սկսած արքայական-կայսերականներից մինչև բուրժուա-ազատամիտները, որոնց միակ նպատակն է հանրապետութիւնը գնել իրենց սեփական շահերի շրջանակի մէջ և այդպիսով ծանրանալ ստորին-գործաւոր, պրոլէտարիատ դասակարգի վրայ, ուրիշ խօսքով ամբարտակել յառաջադիմութեան հոսանքը, խեղդել զրկուածի, ընչազրկի ձայնը։ Սենատն այդ կազմակերպութիւնը պիտի ստանար, որովհետև նրա ստեղծող, յառաջ ածողներն եղել են յետադիմականները և բուրժուաները։ Եւ արդարև այդ պատճառով, սահմանափակ քուէի վրայ հաստատուած խորհրդարանի 300 անդամներից 225-ը ընտրում են քաղաքային խորհրդարանի պատգամաւորները, պատգամաւորների ժողովի անդամները, նահանգական և գաւառական խորհրդականները։ Իսկ 75 հոգի ընտրում են ազգային ժողովի կողմից, որոնցից 29-ը անխախտ (inamovible) են։ Ուրեմն այսօր սենատը ոչ թէ Գամբետտայի սահմանածի (définition) նման «ֆրանսիական համայնքների մեծ խորհրդարանն» է, այլ ֆրանսիական կապիտալիստ, քաղաքական շահագործողների անարդար իրաւանց մարմնացումը և արտօնավայրը։ Ոչինչ այնքան նողկալի չէ, որքան մի տեղ համախմբուած տեսնել պատմական անարդարութիւն, լեշակեր կապիտալիստ-բուրժուաների վոհմակը։

Անմտածող, շաղզակերների միայն արտաքին տեսքը սրտմտութեան սարսուռ է ազդում։ Իսկ կեղծաւորութիւնը, պատրուակեալ անհրաժեշտութիւնը։ Իր դասակարգային շահի մէջ գնել ուրիշի գոյութեան պայմանները և երջանկութիւնը, հաւասարապէս դատապարտելի և զզուելի է, ինչ անուն էլ որ կրի այդ սկզբունքի վրայ հիմնուած հաստատութիւնը։

Ամեն ժամանակ, երբ ինձ պատահել է այդ սենատ կոչուած հաստատութեան նիստերին ներկայ լինել, զզուանքով ներս եմ մտած և սրտմտութեամբ դուրս եկած։

Արմատական մինիստրութիւնը կառավարութեան գլուխ անցաւ, որովհետև Ֆրանսիան այլևս անկարելի էր արքայական-յետադիմականների և պահպանական-չափաւորականների գծագրած շրջանակի մէջ պահել։ Հարկաւոր է վերանորոգում։ Արմատական մինիստրութիւնը պաշտօնի մէջ մտած օրից աշխատեց երկրի վերանորոգման բաղձանքներին լրում տալ։ Եւ որովհետև մինիստրութեան յառաջադրած այդ վերանորոգումները տրամագծօրէն հակառակ էին յետադիմականների և բուրժուա-չափաւորականների շահերին, ուստի սրանք ոգի ի բռին հակառակեցին։ Սակայն նրանք յաղթուեցան պատգամաւորների ժողովի մէջ։ Բայց այդ դեռ հուրք չէր վերջնական յաղթութեան համար, այնտեղ կար սենատ, որի մէջ մինիստրութիւնը, բնականաբար, շատ քիչ կողմնակից ունէր։

Արմատական մինիստրութիւնը սպառնում էր նոյն իսկ սենատի գոյութեանը, ուստի պայքարը անխուսափելի էր։ Հակառակ սենատի երկիցս «[illegible]» (sic!) մինիստրութիւնը իւր պաշտօնը շարունակեց։ Սենատը զայրագնեցաւ, նրա զայրագնութիւնը կատաղութեան փոխուեց, երբ պատգամաւորների ժողովը Մադագասկարի զինուորների փոխման վարկը քուէարկեց և բաժանուեց, առանց սպասելու սենատի որոշման։

Սենատը սրտմտութեան ուրիշ կէտ էլ ունէր։ Շուտով քաղաքի խորհրդականների ընտրութիւնը պիտի լինէր, իսկ այդ ընտրութեանց արդիւնքն աղէտալի կարող էր լինել սենատի համար, եթէ այդ ընտրութիւնները տեղի ունենային արմատական մինիստրութեան օրօք։ Ուրեմն սենատը իւր և իւր միւս ընկերակցների շահի տեսակէտից ստիպուած էր ամեն ճիգ թափել արմատական մինիստրութիւնը տապալելու։ Սենատը այդ ուղղութեամբ էլ ընթացաւ։ Նրա վերջին գնդակն եղաւ Մադագասկարի զինուորների փոխման վարկը։ Չնայելով որ պատգամաւորների ժողովն այդ վարկը վաղուց էր քուէարկել, իբրև մի անհրաժեշտ ծախք, բայց սենատն ուզեց այդ առիթից լաւ օգտուել։

Եւ օգտուեց։

Սենատը Մադագասկարի զինուորների վարկի մերժմամբ նպատակ ունէր մինիստրութիւնը մի անելանելի դրութեան մէջ դնել, որպէսզի վերջինս ստիպուած հրաժարուի։ Այստեղ խնդիրը ոչ թէ Մադագասկարում եղող զինուորի վարկի խնդիրն է, այլ բուն քաղաքական խնդիր։

Մինիստրութեան խնդրած վարկը պատգամաւորների ժողովը, հանրաքուէի ներկայացուցիչ բերանը, արդէն քուէարկել էր, իսկ սենատը, իւր փցուն առանձնաշնորհումները և դասակարգային շահը չվտանգելու համար, պատշաճ համարեց մի դատապարտելի միջոցի դիմել, որպէսզի մինիստրութեանը հրաժարել ստիպէ։ Ուրեմն սահմանափակ քուէի առանձնաշնորհեալ ներկայացուցիչներն ուզում էին ղեկավարել և իրենց քմահաճոյքին ենթարկել ազգային միահեծանութիւնը։

Բայց միթէ այդ հարուածով սենատը կարծում է, որ իւր գոյութիւնն ընդմիշտ կարող է ապահովել,

Ֆրանսիական ազգը մի իրաւախնդիր ազգ է։ Այն ազգը, որ մի դարի մէջ երեք յեղափոխութիւն է արել, դիւրութեամբ թոյլ չի տալ, որ իւր իրաւունքները ոտնակոխ լինեն։

Ս. Սապահ-Գիւլեան։

Պարիզ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ապրիլի 23-ին, Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Փէոդորովնայի անուանակոչութեան օրը, Վանքի աւագ եկեղեցում գոհաբանական մաղթանք կատարուեցաւ։ Քաղաքը զարդարուած էր դրօշակներով, իսկ երեկոյեան չքեղ լուսավառութիւն կար։

—

Յայտնի է, որ պարսից Նասր-Էդդին շահը զոհ գնաց մի բաբիի մոլեռանդութեան։

Բաբիութեան—այդ նոր, բայց ուժեղ աղանդով հետաքրքրուողների ուշադրութիւնը կարող ենք հրաւիրել մեր աշխատակից Մ. Տ. Ա.-ի ընդարձակ յօդուածի վրայ, որ կրում է «Ի՞նչ է բաբիութիւնը» խորագիրը և հրատարակուած է «Նոր-Դար»-ի 1894 թուականի 77, 78, 79 և 80 համարների բանասիրական բաժնում։

Այդ հետաքրքիր յօդուածը «Նոր-Դար»-ից թարգմանուեցաւ անգլիերէն և հրատարակուեցաւ անգլիական թերթերում։

—

Թագադրութեան առթիւ Թիֆլիսի քաղաքային ուսումնարանների աշակերտներին պիտի բաժանուին Նոցին Մեծութիւնների պատկերները։ Բացի դրանից, որոշուած է լուսավառութեան և ժողովրդական զբօսանքների ժամանակ քաղաքային հրապարակների վրայ երաժշտական խմբեր նուագեն։

—

Գանձակից մեզ հաղորդում են, որ տեղոյն քաղաքային խորհուրդն ապրիլի 20-ին մի արտակարգ ժողով գումարելով որոշել է 1,500 ր. յատկացնել Նոցին Մեծութիւնների թագադրութեան առթիւ հանդէսներ սարքելու համար։

—

Թագադրութեան հանդէսներին ներկայ լինելու համար Մոսկուա են գնալու բազմաթիւ պատգամաւորութիւններ Կովկասի լեռնաբնակ ցեղերից, Անդրկասպեան երկրից և Թուրքաստանից։ Այդ ներկայացուցիչների համար վարձուած է Մոսկուայի «Պարիզ» հիւրանոցը։

—

Մեր հաղորդած այն տեղեկութիւնը, թէ երկուշաբթի, ապրիլի 22-ին, Թիֆլիսի պարսիկները տօնեցին իրենց նոր շահի գահակալութիւնը և թէ այդ օրը պարսից ընդհանուր-հիւպատոսը շնորհաւորութիւններ էր ընդունում,—սխալ է։ Թիֆլիսի պարսիկների մէջ դեռ ևս չի տօնուած Մուզաֆֆար-էդդինի գահակալութիւնը, թէև Թեհրանում արդէն յայտարարուած է այդ մասին։ Մուզաֆֆար-էդդինը գահ է բարձրացել Թաւրիզում և ինչպէս երևում է այսօրուայ մեր հրատարակած հեռագրներից, մայրաքաղաք կըժամանի առաջիկայ շաբթին։

—

Գուցէ ընթերցողը յիշում է, «Կավկազ» լրագրի անցեալ համարներից միում Իլ. Խոնելի ստորագրութեամբ «Թաւցի՛կ ակնարկներ» խորագրի տակ լոյս տեսած յօդուածի դէմ մեր արած նկատողութիւնը մեր թերթի մէջ։ Խնդիրը վերաբերում է Թիֆլիզի Դիդուբէ թաղի վրայ եկեղեցուն, որի բակի մի մասը ինչպէս ասում է պ. Խոնելին, իբր թէ յափշտակել է մի հայ, խլացրել, պարըսպապատել և խանութ է բաց արել այնտեղ։ Մեղադրանքն ուղղած լինելով Նունէ Դուլուխեանցի դէմ, վերջերս մի հերքումն լոյս տեսաւ «Կավկազ» լրագրի մէջ։ Սակայն այդ հերքման մէջ, ինչպէս իմանում ենք տիկնոջ խմբագրութեանս ուղղած մի նամակից, դուրս է ձգուած մի կտոր։ Արդ տիկին Դուլուխանեանը խնդրում է մեզ հրատարակել ինչպէս իւր այդ նամակը, նոյնպէս և Իլ. Խոնելու «Թաւցիկ նամակները», նըմանապէս և իւր հերքումն այդ ակնարկների դէմ, որը կանենք թերթիս յետագայ համարներում։

—

Աշնանը Վարշաւում տպագրական գործի ցուցահանդէս է բացուելու։

—

Հայ դերասանական ընկերութիւնը, իւր բարոյական պարտքը կատարելով, մի բարի գործի է ձեռնարկել. մայիսի 2-ին նա տալիս է մի ներկայացում այս օրերս վախճանուած յուշարար Գաբրիել Մատինեանի որբացած ընտանիքի օգտին։ Հանգուցեալը թողել է կին և մատաղահաս երեխաներ դառն չքաւորութեան մէջ։ Լիայոյս ենք, որ մեր հասարակութիւնը պիտի աջակցէ այս բարի գործին։ Ընկերութիւնը պիտի ներկայացնէ Սունդուկեանցի «Էլի մէկ զոհ» կոմեդիան։

—

ՇՈՒՇՈՒՑ.—Նահանգական դատարանի բաժնում քննւում էր քաղաքիս առաջին մասի ոստիկանապետ Իւան Ճգնաւորեանի գործը, որի ուրեադնիկը սպանել էր մի դարադաղցի հայ անմեղ մշակի։ Գործի քննութիւնը սկսուել էր ապրիլի 20-ից. հետևեալ օրը քննութիւնը վերջացաւ և դատարանը հետևեալ վճիռը կարդաց. ոստիկանապետ Իւան Ճգնաւորեանցին զրկել բոլոր իրաւունքներից և ուղարկել Սիբիր բնակութեան. ոստիկանների գլխաւոր Աւետիս Աղաբաբեանցին ուղարկել 10 տարի տաժանակիր աշխատանքի Սիբիրի խորքերը. մի ուրիշ ոստիկանի ենթարկել ութ ամսուայ բանտարկութեան. 3 ուրիշ ոստիկանների, որոնց թւում և մի թուրք ոստիկանի, 3 ամսուայ բանտարկութեան։

—

ՓԱՐԱԲԻՑ (Անդրկասպ. երկիր).-Երէկ, ապրիլի 8-ին, արտակարգ գնացքով տեղս հասաւ Բուխարայի էմիրը, որ մի ժամ 10 րոպէ մնալուց յետոյ ճանապարհը շարունակեց Ամու-Դարիայի վրայով դէպի Չարջոյ։ Էմիրը գնում է Պետերբուրգ և յետոյ Մոսկուա թագադրութեան հանդէսներին ներկայ լինելու համար։

—Եղանակները փոփոխական են, երբեմն տաք, երբեմն անձրևային-ցուրտ։ Այս առաջին անգամն է, որ այս տարի ապրիլի վերջին կիսում ցրտեր ենք տեսնում։

—

ՇԱՄԱԽՈՒՑ։ Ապրիլի 18-ին Բագուի վրայով Մոսկուա մեկնեց Ալէքսանդր բէկ Լալայեանց։ Պարոնը ներկայ պիտի գտնուի Նոցին Կայսեր. Մեծութեանց թագադրութեանը, ոչ իբրև Շամախու քաղաքի ներկայացուցիչ, ինչպէս սխալմամբ յայտնուած էր լրագիրներին, այլ իբրև ազնուականների ներկայացուցիչ ամբողջ Բագուի Նահանգի։

Պարոնին ճանապարհ ձգեցին քաղաքիս յայտնի անձինք։ Սրանով երկրորդ անգամն է, որ Պ. Լալայեանը իբրև ներկայացուցիչ գնում է Մոսկուա Կայսրների թագադրութեանը ներկայ լինելու ազնուականների կողմից։

—

ՍԱՂԻԱՆԻՑ (Շամախու գաւառ).—Մեր գիւղում այս տարուայ ձմեռուայ պէս ձմեռ չէր տեսնուած. դեռ մինչև հիմա էլ ժամանակ առ ժամանակ սաստիկ անձրևներ են տեղում։ Նոր-Թայ կոչուած տեղի գետը վարարած լինելով զոհ տարաւ մեր գիւղից մի երեխայ։

—

Խմբագրութիւնս ստացել է Յովհաննէս Թումանեանի «Լոռեցի Սաքոն» պօէման (փոփոխուած) և Բայրընից թարգմանած «Շիլիօնի կալանաւորը», որոնք լոյս են տեսել Թիֆլիսում այս տարի Փիլիպպոս Վարդազարեանի հրատարակութեամբ։ «Լոռեցի Սաքոն» իբրև ինքնուրոյն գրուածք, անհամեմատ աւելի աջող է լեզուի և ոտանաւորի սահունութեան կողմից, քան թէ թարգմանական «Շիլիօնի կալանաւորը», որի ոտանաւորը շատ տեղ բռնազբօսիկ է։

—

ՇԱՄԱԽՈՒՑ. Ապրիլի 20-ին թեմիս սրբազան Առաջնորդը դպրութեան և սարկաւագութեան աստիճան տուեց և 21-ին քահանայ ձեռնադրեց շուշեցի Նիկողայոս Ահարոնեանցին։ Նորընծան ուսուցչական պաշտօն էր վարում Նուխի քաղաքի երկսեռ դպրոցներում և այժմ ձեռնադրւում է նոյն քաղաքի ս. Մինաս անուն եկեղեցու համար։ Նորընծան իւր ուսման ընթացքը աւարտել է Շուշու թեմական դպրոցում։

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

—

⁂ Զանազան ժամանակներ հրատարակուած դատարանական վճիռների մէջ անգիտակցաբար սպրդած են լինում կոպիտ սխալներ, որոնք աղէտաբեր հետևանքներ են ունենում յանիրաւի դատապարտուածների վերաբերութեամբ։

Այդ տեսակ սխալներից մէկի մասին Իրկուտսկից «Ենիսէյ» թերթին գրում են հետևեալը.

> Ներկայումս Իրկուտսկում գտնւում է Գրուբէ անունով մէկը, որը այդտեղ սպասում է գարնան բացուելուն։ Նա երկու և կէս տարուց ի վեր դատապարտուած էր տաժանակիր աշխատութեան և այժմ իբրև անմեղ վերադառնում է իւր աքսորավայր Զերենտուից։ Անցեալ տարուայ սեպտեմբերի 15-ին դուրս գալով Զերենտուից, որ 1,300 վերստ հեռաւորութիւն ունի Իրկուտսկից, ամբողջ չորս ամիս շարունակ ճանապարհ է ման եկել։ Տեղս (Իրկուտսկ) հասաւ յունուարի 15-ին, համարեա կէս սատած վիճակի մէջ։

Գրուբէն դատապարտուել է Ռիգայում մի տուն կրակ տալու ամբաստանութեամբ, և ժամանակին իւր կողմից ներկայացրած բոլոր գանգատներն ու բողոքները մնացել են անհետևանք։

Լրագիրը իրաւամբ նկատելով, թէ բարեբաղդաբար այդ դէպքում արդարութիւնը շուտով է երևան եկել, արդար զայրոյթով բացականչում է՝

> Անուանարկութիւն, երկու և կէս տարի տաժանակիր աշխատանք, առողջութեան խանգարումն, ամբողջ ապագայի խորտակումն,—ահա թէ ինչպիսի աղէտաբեր հետևանքներ է ունենում դատական որևէ մի սխալ վճիռ։

⁂ Մօտ ժամանակներս Թիֆլիսի թերթերից մէկում «Կավկազ» լրագրի աշխատակից պ. Իլ. Խոնելլի վերաբերութեամբ տպուած էր հետևեալ տողերը.

> Մոսկուայից հաղորդում են մեզ.
>
> «Մոսկով. Վեդոմ.»-ի խմբագրութիւնը, ինչպէս մեզ հաղորդում են, յառաջիկայ մայիսից Թիֆլիսում բաց է անում իւր խմբագրութեան բաժանմունքը ամբողջ Անդրկովկասի համար։ Բաժանմունքը բացի բաժանորդներ և յայտարարութիւններ ընդունելուց և լրագրի առանձին համարներ վաճառելուց, իրաւունք պէտք է ունենայ նաև յօդուածներ ընդունելու։ «Մոսկ. Վեդոմ.»-ի խմբագրութեան այդ բաժանմունքի վարչութիւնը պիտի յանձնուի կովկասեան յայտնի ֆիլիետոնիստ պ. Իլ. Խոնելլին, որին իբրև օգնական սկզբում պիտի ուղարկուի խմբագրութեան մշտական աշխատակիցներից մէկը»։

«Մոսկով. Վեդոմ.»-ին առաջ բերելով այդ տողերը, յայտնում է, որ «այդ ամենը հիմնովին սուտ է»։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

Կ. ՊՈԼԻՍ, 16 ապրիլի.—Ամսոյս 14-ին, կիրակի օրը կատարուեցաւ Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդ հանգուցեալ Սիմէօն արքեպիսկոպոս Սէֆէրեանի օծման և յուղարկաւորութեան հանդէսը։

Հազիւ մի տարի կայ, որ նախ՝ պատրիարքական և ապա Սսոյ կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, մենք առիթ ունեցանք յիշելու այդ եկեղեցականի անունը։ Նա այն ժամանակ թեկնածուների թւի մէջ էր, իսկ այսօր սառն հողի մէջ, ծանր կափարիչի տակ հանգիստ պառկած։

Հանգուցեալ Սիմէօն սրբազանն ունէր իւր յարգողների շրջանը, և թաղման հանդիսին բազմութիւնը շատ խուռն էր։ Արդէն բարձր եկեղեցականի վերջին օծման և թաղման հանդէսն ինքնին սակաւադէպ է, որ դէպի իրեն էր ձգել հազարաւոր մարդիկ։ Գում-Գափուի մայր եկեղեցին չքեղ կերպով զարդարուած և լուսաւորուած էր։ Սեղանի աջ կողմը, պատուանդանի վրայ դրուած էր հանգուցեալի դագաղը, ուր յաւիտենական խաղաղ քնով ննջում էր Սիմէօն սրբազանը եպիսկոպոսական զգեստների մէջ։ Հմայեակ եպ. Դիմաքսեանը պատարագիչ էր և եկեղեցական այդ արարողութեան շուքը աւելացնում էր բազմաթիւ եկեղեցականների, դպիրների և խուռն բազմութեան ներկայութիւնը։

Աւետարանի և «Հաւատամք»-ի ընթերցումից յետոյ կատարուեցաւ հանգուցեալի օծման արարողութիւնը։ Այդ արարողութիւնը կատարեց ինքը ս. Պատրիարքը եկեղեցական դասով շրջապատուած։ Օծման կարգը կատարելուց յետոյ ս. Պատրիարքն առոյգ շեշտով խօսեց դամբանական քարոզ, նիւթն առնելով ուղղակի եպիսկոպոսական պաշտօնը։ Գեղեցիկ խօսքեր, գեղեցիկ մտքեր և աւելի գեղեցիկ խորհրդածութիւն՝ այդ եկեղեցական բարձր պաշտօնի մասին, բայց տեղն էր ասելու ս. Պատրիարքին, «Չի արկանէք մարգարիտս առաջի խոզոց»... Հաւատա՞մք, որ մեր եպիսկոպոսները չգիտեն իրենց պաշտօնի ու կոչման սրբութիւնը։ Ընդհակառակը, մենք համոզուած ենք, որ յետին եկեղեցականն էլ շատ լաւ գիտէ իւր կոչումը, իւր պարտականութիւնը, թէև նա միշտ թերի է գտնւում այդ պարտականութեան դէմ, միշտ շեղւում է ուղիղ ճանապարհից։ Աւելի ևս մեր բարձրաստիճան եկեղեցականները, որոնք եթէ ոչ բարձր գիտութիւն, գէթ կեանքի և պարտականութիւնից փորձառական ուսումն ունին, թէև նրանց մէջ հազարից մէկը կըգտնէք, որ իւր պաշտօնը գոնէ այնպէս կատարէ, ինչպէս իւր մտքում հասկանում է նրան։ Ուրեմն ս. Պատրիարքի նպատակայարմար քարոզը մի կարգ եպիսկոպոսների և եպիսկոպոսացուների վրայ գայլի շարականի տպաւորութիւն կարող էր թողնել։

Ս. Պատրիարքի դամբանական քարոզից իմացանք, որ Սիմէօն սրբազանը 1859 ին վարդապետ և 1867-ին եպիսկոպոս էր ձեռնադրուել։ 1872-ին ստանձնել էր Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդի պաշտօնը, իսկ 1888-ին վարել էր Պոլսոյ պատրիարքական տեղապահի պաշտօնը, մասնակցելով նաև վարչական բոլոր ժողովներին։ Սիմէօն սրբազանի գլխաւոր պաշտօնը Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդութիւնն էր, որ վարում էր մօտ երեսուն տարի։

Ի հարկէ, ս. Պատրիարքը գրուատեց հանգուցեալի արժանաւորութիւնները միայն, սակայն մենք մեր կողմից կաւելացնենք, որ նա այն եկեղեցականներից էր, որոնք իրենց իրաւասութեան յանձնուած գործը թէև չեն փչացնում, բայց շահեցնելու էլ կարողութիւն ու ընդունակութիւն չեն ունենում։ Սա, եթէ լաւ նայելու լինինք, մի խոշոր պակասութիւն է, նման Աւետարանի այն երեք ծառաներից մէկին, որ տիրոջից ստացած գանձը հողում թաղեց նոյնութեամբ վերադարձնելու համար։ Սրանով՝ ի հարկէ, մենք միտք չունենք հանգուցեալի [illegible] յանդիմանութիւն կարդալ, որպիսի յանդիմանութիւն կարդաց Աւետարանի տէրը իւր ծառային, ընդհակառակը, մենք ստիպուած ենք նրա հետ այդ խոշոր պակասութիւնն էլ մի մեծ արժանիք համարելու, հիմնուելով այն բանի վրայ, որ մեր եկեղեցական պաշտօնեաներից շատերն իրենց յանձնուած պաշտօնը, գործը և այլն նոյնութեամբ պահելու, գէթ չքանդելու, չկործանելու բարեխղճութիւնն էլ չեն ունենում։

Օծման արարողութիւնից և դամբանականից յետոյ ս. Պատրիարքը, շրջապատուած եկեղեցական դասով և կրօնական ու քաղաքական ժողովների անդամներով գնաց Երուսաղէմատունը ցաւակցութիւն յայտնելու Երուսաղէմայ պատր. փոխանորդի օգնական՝ Տ. Գէորգ ծ. վարդապետ Երէցեանին։ Ապա կրկին դարձաւ եկեղեցի, և երեկոյեան ժամը 1-ին կազմուեցաւ յուղարկաւորութեան թափօրը։ Թափօրը դուրս գալով եկեղեցիցուց, կանգ առաւ Երուսաղէմատան առջև, ուր ս. Պատրիարքը կարդաց աւետարանը և իւր հրաժեշտը տալով բաժանուեցաւ։ Դագաղը քահանաների ուսերի վրայ առաջացաւ մինչև Գում-Գափուի երկաթուղու կայարանը և դատնալով դէպի ձախ, անցաւ յունաց եկեղեցու առաջով և պտոյտ գործելով կանգ առաւ պատրիարքարանի փողոցի միւս անկիւնում, ուրտեղից դրուեցաւ գլխակառքի մէջ և տարուեցաւ Բալըքլի գերեզմանոցը: Յունաց եկեղեցու առաջ հասած ժամանակ, դագաղին դիմաւորեց յոյն եկեղեցական դասը զգեստաւորուած: Դագաղը վայր դրուելով, յոյն եկեղեցականները հոգեհանգստեան կարգ կատարեցին, և նրանցից մի վարդապետ ընկերացաւ թափօրին մինչև դագաղը գլխակառքի մէջ դնելը:

Բացի հազարաւոր բազմութիւնից, թափօրին մասնակցում էին քսան քահանաներ, տասը վարդապետներ, վեց եպիսկոպոսներ և դպրաց դասը: Թափօրին նախագահում էր ինքը՝ ս. Պատրիարքը, մինչև որ բաժանուեց: Դագաղի ետևից որպէս սգակիր հետևում էին Մելքիսեդէկ սրբազան Մուրադեանը, պատրիարքական փոխանորդ Գաբրիէլ ծ. վարդապետ Ճէվահիրճեանը և Գէորգ ծ. վար. Երէցեանը:

Ինչպէս լսեցինք, հանգուցեալ Սիմէոն եպ. Սէֆէրեանն ունէր թրքական «Մէճիդիէ» պատուանշանի երկրորդ աստիճանը և ռուսական ս. Աննայի պատուանշանը:

Դագաղը Սամաթիայի եկեղեցին տարուելուց և այնտեղ էլ հոգեհանգիստ կատարուելուց յետոյ, վեց վարդապետների և տասներկու քահանաների առաջնորդութեամբ տարուեցաւ հանգստարանը, ուր թաղման կարգը կատարեց Տիմոթէոս եպ. Սափրիչեանը:

Այսպիսով եպիսկոպոսական դասը կորցրեց իւր ծերունի անդամներից մէկին, բայց տայ Աստուած, որ այդ պակասը լցնող եպիսկոպոսացուն ընդունակ գտնուէր ըմբռնելու, թէ այժմ իրենց համար վերապահուած է Ղևոնդեանց դասը իւր բոլոր ծանրութեամբ ու արհաւիրքով, երբ Ղևոնդեանց չափ մտքի ու հոգոյ քաջութիւն պիտի ունենան, որպէսզի արժանի լինին նրանց անմահ անուան:

Mars.

ՆԱՄԱԿ ՓՐԱՆՍԻԱՅԻՑ [1]

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

ՊԱՐԻԶ, 22 ապրիլի (ն. տ.). — Սենատի արձակուրդին վերջ էր նշանակուած ապրիլի 21-ին: Այդ օրը պիտի քննուէր Մադագասկարի զինուորների փոխման ծախքը: Մինչև այդ օրը ամբողջ լրագրութիւնը երկու բանակի էր բաժանուած, մէկը խորհուրդ էր տալիս սենատին մոռանալ իրենց ներքին պառակտումները և վարկը քուէարկել, իսկ միւսը խրախուսում էր սենատին օգտուել այդ միջոցից ընդդէմ մինիստրութեան: Յայտնի էր վաղուց, որ սենատն այս վերջինների խորհրդին պիտի հետևէր:

Ապրիլի 21-ին այդ հռչակաւոր նիստը տեղի պիտի ունենար: Դեռ շատ վաղ ամեն կարգի զինուորներ, լրտեսներ Լիւքսամբուրգի պալատի չորս կողմը պաշարել էին: Ներքին գործերի մինիստրութիւնը ամեն միջոց ձեռք էր առել, որ մի գուցէ ժողովրդական յարձակումն տեղի ունենայ: Կէսօրուայ ժամը $2^1/_2$-ին նախագահ պ. Լուբէն իւր աթոռի վրայ բազմեցաւ: Վերնայարկերը, վերնատունը լի է ժողովրդով: Պատգամաւորների ժողովի բազմաթիւ անդամներ ներկայ են: Լի են նաև բոլոր կողմանոցները, ուր սովորաբար մեքենայւում են ամեն կարգի քաղաքական ու տնտեսական խնդիրներ:

Մինիստրական նստարանի վրայ նըստած են պ.պ. Լէօն Բուրժուա, Սարրիէն, Դումէ, Լոկրուա, Կոմս, Կավէյնակ և այլն: Պ. Բուրժուան և իւր պաշտօնակիցները որքան որ ուզում են հանդարտ երևալ, բայց ամենափոքր դիտողութիւնը ցոյց է տալիս, որ ներքին յուզումը իրենց սիրտը կրծում է: Մի փոքր յետոյ ներս է մանում պ. Ռիբօ, որին հանրապետականներն ընդունում են ծափահարելով:

Սենատի անդամներն էլ աւելի ջղաձգական դրութեան մէջ են: Պահպանողականների մէջ տիրում է սաստիկ յուզումն, իրարանցում, քրթմնջիւն...:

Հանրապետականների փոքրիկ խումբը հայեացքի կատաղի շանթեր է արձակում դէպի կեդրոնը. Պայքարի ժամը մօտենում է:

Սովորական ձևակերպութիւններից յետոյ, պ. Նախագահը կարդում է պ. Ռուսսոյի մի առաջարկութիւնը, որ նըպատակ ունի սահմանադրութիւնը վերաքննել: Այնուհետև պ. Լուբէն հրաւիրում է սենատին իւր օրակարգը կանոնաւորել:

Այդ ժամանակ ամբիոն է բարձրանում մի գիրուկ, մեծափոր ծերուկ, պ. Դըմոլ, և կարդում է հետևեալ առաջարկութիւնը, որ բողոքի անընդհատ ձայներ է բարձրացնում արմատականների կողմից, և ընդհակառակը ծափահարութեամբ ընդունւում չափաւորականների կողմից:

Դըմոլ.—Պարոններ, սենատը երեք անգամ ահագին մեծամասնութեամբ, ձեզ ծանօթ հանգամանքների մէջ, իւր անվստահութիւնը յայտնեց մինիստրութեան: Սակայն ի դրժումն սահմանադրական օրէնքի, այդ մինիստրութիւնը իշխանութեան մէջ մնաց: Այսօր նա մեզանից խնդրում է Մադագասկարի արշաւանքի համար վարկ քուէարկել: Արդարև մեր ոչ մէկի մտքով չի անցնել անհրաժեշտ վարկը սակարկութեան ենթարկել ֆրանսիական զինուորների համար...

Ձախ կողմից մի ձայն.—Դա մի ճառ է:

Նախագահ.—Պարոններ, հռետորը սովորական իրաւունք է գործածում:

Պէյտրալ.—Ձեր արածը կանոնի ընդդէմ է:

Դըմոլ. - ...Նրանց համար, որոնք մեր հեռաւոր կալուածների մէջ պաշտպանում են մեր պատիւը և մեր դրօշը...

Բոննֆուա-Սիբուր.—Նախ վարկը քուէարկեցէք:

Պէյտրալ.—Նախ նրանց ուտելու հաց տուէք:

Դըմոլ. - Սենատը ողջունում է նրանց, իբրև հայրենիքի ամենասիրելի զաւակների...:

Պոլիա. - Նրանք այս րոպէիս տանջւում և մեռնում են:

Դըմոլ.—Ոչ մի զոհաբերութիւն չկայ, որին սենատը պատրաստ չլինի համակերպել, որպէս զի նրանց ազատէ տանջանքից և վտանգից...

Պէյտրալ.—Օրակարգը:

Դըմոլ. - Մենք առաջարկում ենք սենատին այդ մասին խնդրուած վարկի քուէարկումը յետաձգել, մինչև որ մեր առաջը ներկայանայ մի սահմանադրական մինիստրութիւն, որ երկու խորհրդարանի վստահութիւնը վայելէր:

Պ. Դըմոլի այդ առաջարկութիւնը, որ ծերունուն յատուկ սառնութեամբ և անտարբերութեամբ էր կարդում, բուռն բողոքի տեղիք տուեց ձախակողմեանների կողմից, մինչդեռ չափաւորականները երկարատև ծափահարութիւններ էին շռայլում և ուրախութիւնից իրենց բազկաթոռներին ցցուած յաղթական ակնարկներ էին նետում իրենց հակառակորդների փոքրիկ խմբի վրայ: Կրքերի այդ բուռն յուզման միջոցին, ամբիոն է բարձրանում պ. Լէօն Բուրժուա գրեթէ գունատուած, դողդողալով և յայտարարում է, որ ինքն ամբիոն է բարձրանում թէ բողոքելու և թէ մի հաստատութիւն յառաջ բերելու:

Բուրժուա.—Ես բողոքում եմ պ. Դըմոլի արտասանած խօսքերի դէմ, որով յայտարարում է թէ ներկայ մինիստրութիւնը ձեր առաջը ներկայանում է ի դրժումն սահմանադրական օրինաց: Ոչ ես և ոչ երկու խորհրդարաններից (Chambres) մէկն իրաւունք ունի մեկնաբանելու սահմանադրական օրէնքները: Այդ իրաւունքը միայն կոնգրեսն [2] ունի: Այժմ ես հետևեալ հաստատութիւնն եմ աւելացնում: Երբ խնդիրը վերաբերում է մի վճռաբանութեան, որ ոչ մի կապ չունի մեր ներքին քաղաքական խնդիրների հետ, մի առաջարկութիւն է արուած, որ նպատակ ունի ոչ միայն մերժել Մադագասկարի զինուորների պահպանութեան վարկը, այլ և մերժել այդ վարկը քննելու:

Գադո.—Ո՛չ ո՛չ, այդպէս չէ:

Տրարիօ.—Մենք մերժում ենք միայն վճռաբանել մինիստրութեան հետ:

Բուրժուա.—Այդ առաջարկութեան նըպատակը ես ոչ մի դատողութիւն չէի ուզիլ առաջ բերել: Բայց ներշնչուելով աւելի վեհագոյն զգացումներով, մի կողմ թողնելով մեր ներքին պառակտումները, սենատն իւրն արած առաջարկութիւնը կարող է մերժել: (Ձախ նստարանների վրայ ծափ. աղմուկ):

Իբրև նախագահ ձախակողմեան հանրապետականների պ. Բազուէլը առաջարկում է, յանուն Մադագասկարում մի տարուց աւելի տանջուող զինուորների, իսկոյն և եթ վարկը քուէարկել: Այդ մի հայրենասիրական խնդիր է, ասում է նա: Կեդրոնը և բոլոր պահպանողականները բողոքում են և յայտարարում, որ իրենք ևս հայրենասէրներ են և հայրենասիրութիւնը միայն պ. Բազուէլի մենավաճառը չէ:

Պ. Ժէբի-Լըգրան համաձայնելով որ մինիստրութիւնը չի յարգել սահմանադրական օրէնքները, յայտարարում է, որ ինքը պատրաստ է քուէարկել մինիստրութեան խնդրած վարկը:

Պ. Վիյնանկուռ մի երկար կարկատուած ճառով նախ ուզում է յարձակում գործել հասարակապետութեան նախագահի վրայ, որ պաշտօնի կանչեց արմատական մինիստրութեան, երբ այդ ակնարկութեան դէմ բողոքում են նոյն իսկ իւր համախոհները, այն ժամանակ սկսում է խորհուրդ տալ սենատին զգուշական միջոցներ ձեռք առնել, որ մի գուցէ վարկը մերժելուց յետոյ խռովութիւն և յեղափոխութիւն տեղի ունենայ երկրի մէջ. վերջը ինքն էլ մերժում է մինիստրութեան խնդրած վարկը: Այդ ժամանակ հետևեալ միջնադէպը տեղի ունեցաւ պ. Տրարիօյի և պ. Լէօն Բուրժուայի մէջ:

Պ. Տրարիօ.—Եթէ ամբիոնում ինձ նախընթացող յարգելի պաշտօնակիցներիս հետ մենք կարծէինք, որ պ. Դըմոլի առաջադրած առաջարկութիւնը միայն մի օր տանջանք և չարչարանք կըպատճառէ Մադագասկարում եղած մեր զինուորներին, այն ժամանակ ես կըլռեցնէի իմ անհանգստութիւններս և իմ ձայնս մինիստրութեան կըտայի: Բայց պ. Դըմոլի առաջարկութիւնը վարկը չի մերժում, նա առաջարկում է օրաձգել:

Ձախակողմեան մի ձայն.—Մինչև երբ:

Տրարիօ. — Սենատի հայրենասիրութեան մասին կասկած անգամ չի կարող լինել: Մինիստրութիւնը բաղկացած է հայրենասէրներից, ենթադրում եմ...

Լէօն Բուրժուա. — Ինչպէ՞ս: Ենթադրո՞ւմ էք: Ես թոյլ չեմ տալ, որ դուք մեզ այդպիսի խօսքեր ուղղէք:

Տրարիօ.—Բայց ես չեմ կասկածում ձեր հայրենասիրութեան վրայ:

Լէօն Բուրժուա.—Ուրեմն որոշակի խօսեցէք:

Տրարիօ. — Հասկանալի է. «ենթադրում եմ» կընշանակէ «կասկածելի» չէ: Եւ որովհետև մինիստրութեան հայրենասիրութիւնը կասկածելի չէ, ուստի խնդիրներն աւելի կըպարզուին: Մինիստրութիւնը պիտի գիտենայ, որ սահմանադրութիւնն ասում է թէ սենատը պատասխանատու չէ մինիստրութեան, այլ մինիստրութիւնն է պատասխանատու սենատին:

Պ. Լուբէն երկրորդ անգամ կարդում է, համաձայն պ. Լէօն Բուրժուայի խնդրանաց, պ. Դըմոլի առաջարկութիւնը և սկսում է քուէարկութիւնը: 171 ձայնով ընդդէմ 90-ի սենատն ընդունում է Մադագասկարի զինուորների համար խնդրուած վարկի քուէարկումը օրաձըգել (ajourner): Այնուհետև որոշուեցաւ, որ սենատը պիտի գումարուի հինգշաբթի:

Ս. Սապահ-Գիւլեան:

---

[1] Այս նամակը կազմում է թերթիս նախընթաց համարում հրատարակուած նամակի սկիզբը և պատից մեր ձեռքը հասաւ այն նամակի հրատարակումից յետոյ միայն, ուստի ստիպուած ենք նրանից յետոյ հրատարակեկել: Խմբ.

[2] Ազգային ժողովը, պատգամաւորների ժողովը և սենատը միացած, որ տեղի է ունենում Վերսայլում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլսի մեր թղթակիցը գրում է մեզ.

«Կառավարութիւնը չկարողանալով ուղղակի արգելել հայերի և օտարերկրացիների արած նպաստի բաշխման Թրքահայաստանի կողոպտուածներին, զէթ անուղղակի արգելք է լինում: Այսպէս գաւառների վալիները և մութասարիֆները հրաման են արձակել, որ նպաստների բաշխումը կատարուի տէրութեան տեղային պաշտօնեաների մէջ: Այս մասին կառավարութեանց ու Բ. Դրան միջև խնդիր է յարուցուած, բայց հետևանքի մասին յայտնի չէ: Կողոպտուածներին ի նպաստ ժողովուած դրամներով կառավարութիւնը մեծ խնամքով կարկատել և վերաշինել է տալիս Պոլսոյ բոլոր մզկիթները»:

—

Կ. Պոլսի մեր թղթակցի մի նամակից քաղում ենք հետևեալը.

«Գուլէլիում գտնուող Թուրքաց զինուորական վարժարանում աշակերտների մէջ մեծ կռիւ պատահեցաւ: Աշակերտները երկու մասի բաժանուելով կռւում էին զէնքերով, երբ, ինչպէս պատմում են, մեռել են 12 հոգի և վիրաւորուել մօտ երեսուն հոգի:

«Այդ կռուի բուն պատճառը յայտնի չէ, բայց ասում են, որ նա առաջ է եկել այն բանից, որ ուսանողների կէս մասը պաշտպանել է մօտ օրերումս յանկարծակի ձերբակալուող իրենց ուսուցչին, իսկ միւս կէսը պախարակել է նրան, որպէս ճ---է:

«Յամենայն դէպս վարժարանների մէջ ընդհարման դէպքերի յաճախ կրկնուիլը շատ էլ լաւ նշան չէ, այդտեղից կարող է կրկին ծագել Բանկալթիի դէպքը, որ անցեալ տարի ահագին աղմուկ հանեց:

«Զինուորական վարժարանի աշակերտներն այժմ նոյնը չեն, նրանք բոլորովին փոխուած են և այդ փոփոխութիւնը կարելի է նշմարել նոյնիսկ նրանց մտատխուր դէմքերից»:

—

Կ. Պոլսի մեր թղթակցի մի նամակից իմանում ենք, որ Քիլիսէի մէջ ֆրանցիսկեան կրօնաւոր աշակերտների և Սալվատոր անուն իտալացու սպանութեան գործի մասին ֆրանսիական դեսպան պ. Կամբոնի և Բ. Դրան միջև յարաբերութիւնները լարուած են: Կառավարութիւնը որպէս քննիչ դէպքի վայրն է ղրկել Յովհաննէս Թոսունեանին երկու ընկերների հետ: Բնականաբար Թուրք կառավարութիւնը պատշաճաւոր վճռում անելով, խնդիրը կըփակի:

—

«Daily News»-ին Կ. Պոլսից գրում են.

«Մայրաքաղաքի մէջ դեռ ևս շարունակւում են հայերի ձերբակալութիւնները: Այս օրերս ձերբակալուած է մի հայ վարդապետ, այն Դամատեանի եղբայրը, որի անունը յայտնի է Սասունի անկարգութիւններից: Ձերբակալուած են նմանապէս միքանի թուրքեր, որոնք, ինչպէս կարծում են, երիտասարդ-թուրքերի կուսակցութեան անդամներն են եղել»:

ԱՆԳԼԻԱ. — Լոնդոնում «Primrose League»-ի ապրիլի 17-ին (29-ին) կայացած տարեկան ժողովում լորդ Սոլսբերին մի ճառ է խօսել, որի մէջ դառնալով հայկական խնդրին, ասել է, թէ անգլիական կառավարութիւնն այդ խնդրում պահպանում է նախկին մինիստրութեան քաղաքականութիւնը, այսինքն բարեկամական խորհուրդների քաղաքականութիւն, որովհետև Եւրոպան չկամեցաւ միաբանօրէն ճնշումն գործ դնել սուլթանի վրայ: Կառավարութեանը չպէտք է մեղադրել անյաջողութեան համար, որովհետև այդ քաղաքականութիւնը սկսել է իւր նախորդը:

—

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ.—Սրանից միքանի ամիս առաջ գերմանական մամուլի մէջ խուլ ակնարկութիւններ կային պետական կանցլեր իշխան Հոէնլոէի հրաժարական տալու վերաբերութեամբ: Կանցլերի հրաժարուելու և նրա տեղը Վիէննայի գերմանական դեսպան կոմս Էյլենբուրգի նշանակուելու մասին եղած լուրերը բոլորովին հակառակ են. մի կողմից թէև հերքւում է այդ, սակայն համարեա միաժամանակ պաշտօնական «Berlin. Polit. Nachrich.» թերթում ևս յայտարարւում է, որ իշխան Հոէնլոէն ոչ միայն ֆիզիքական յոգնութիւն է զգում, այլ և խոստովանում է, թէ իրեն շրջապատող պայմանները դժուարութիւնների մէջ են ձգում նրան, ըստորում կառավարութեան ձեռնարկած շատ «պատասխանատու» խնդիրներ զանազան շրջանների կողմից արգելքների են հանդիպում: Վերոյիշեալ թերթը, յիշելով յայտնում է, որ այդ շրջանները, օգուտ քաղելով կայսրի հինգշաբթուայ բացակայութիւնից, ընդարձակել են իրենց գործունէութիւնը և սաստիկ պրոպագանդա արել կառավարութեան դէմ, ոչ միայն պատերազմական նաւատորմղի բարեփոխութեան խնդրի, այլ և ուրիշ նշանաւոր հարցերի վերաբերութեամբ:

Սակայն ընդհանուր համոզումը այն է, որ Վիլհելմ կայսրը դժուար թէ կամենայ իշխան Հոէնլոէից բաժանուել և ներկայ հանգամանքներում Գերմանիայի արտաքին քաղաքականութեան ղեկավարութիւնը յանձնէ մի ուրիշ անձի:

—

ԻՏԱԼԻԱ.—Հռոմից գրում են ֆրանսիական «Temps» թերթին, որ Կրիսպին մօտ օրերս իւր բարեկամ միքանի պատգամաւոր հրաւիրելով իւր մօտ, խիստ կերպով դատապարտել է դի-Ռուդինիի մինիստրութեան գործունէութիւնը: Գալով աֆրիկական քաղաքականութեան, նախկին մինիստր-նախագահը յայտնել է, որ աֆրիկեան արշաւանքի անյաջողութեան մի մասը ծանրանում է իւր վրայ, սակայն գլխաւոր պատասխանատուութիւնը վերագրում է գեներալ Բարատիերին: Կրիսպին իւր բարեկամներին յայտնել է նմանապէս, որ ինքը արդէն բաւական ծեր է, ուստի և յոյս չունի կրկին իշխանութեան գլուխն անցնելու:

Միևնոյն թղթակցութեան մէջ հաղորդւում է, որ Ցենարդելլին Միլանի լրագրներից մէկի խմբագրին յայտնել է, թէ իւր քաղաքական գործունէութիւնը ամբողջովին կախումն կունենայ մինիստրութեան հետևած քաղաքականութիւնից, սակայն, յամենայն դէպս, նա համաձայն է ներկայումս իշխանութեան գլուխ գտնուող անձերի հայեացքներին: Գալով աֆրիկական խնդրին, Ցենարդելլին յայտնել է, որ գեներալ Բարատիերին պատժելու տեղ, աւելի լաւ է պատասխանատուութեան ենթարկել այն բոլոր անձերին, որոնք իրենց ձեռքում իբրև գործիք են գործածել նրան:

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից գրում են «Daily News»-ին.—Բ. Դուռը բրիտանական ռուսաց և ֆրանսիական դեսպաններին խոստացել էր Ջիդդէի հիւպատոսների վրայ գործուած յարձակման համար վարձատրութիւնը երեք մասի բաժանել և այնպէս վճարել, բայց մինչև այժմ այդ մասին գրաւոր ոչ մի հաղորդագրութիւն չի ստացուած. թէ երբ կվճարի—յայտնի չէ.

Նոյն լրագրի ասելով, Թուրքաց ծովային զօրքերի մի մատակարարը հրաժարուել է այլ ևս միսը մատակարարելուց, որովհետև իշխանութիւնը չի վճարել նրան ըստ պայմանագրի իրեն հասանելիք փողը։ Սուլթանը, իմանալով այդ բանը, հրամայել է մի մատակարարին վճարել իր սեպհական գումարներից, այնպէս որ զինուորները նորից միս են ստանում։

—Կ. Պոլսից «Temps»-ին հեռագրում են. -«Լուրեր են պտտում, թէ Բ. Դուռը Պետերբուրգի իր դեսպանից տեղեկութիւն է ստացել, որ Ռուսիայի և Բուլղարիայի մէջ քաղաքական դաշնադրութիւն է ստորագրուած։ Այդ դաշնադրութեանը պիտի միանայ և Սերբիան»։

Վիեննայից հեռագրում են, որ Բուլղարիայի իշխանն այժմ չի գնացել Աւստրիա, որովհետև իր արած հարցին պատասխան է ստացել, որ այժմ ժամանակայարմար չէ նրա այցելութիւնը աւստրիական արքունիքին։

—«Standard» լրագրի Վիեննայի թղթակիցը հաղորդում է, թէ մի քանի պետութիւններ շուտով հրաւիրելու են Անգլիային, որ սա իրագործէ Սուէզի ջրանցքի վերաբերեալ 1888 թ. միջազգային դաշնագրի այն յօդուածը, որ ապահովում է զինուորական նաւերի ազատ երթևեկութիւնը այդ ջրանցքով, այնուհետև Անգլիային կառաջարկուի համաձայնութեան մտնել մեծ պետութիւնների հետ, որ ժամանակ նշանակուի Եգիպտոսից անգլիական զօրքերի հեռացման համար։ Թղթակցի կարծիքով այդ առաջարկն աջողութիւն չի ունենայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կենդանիների տարիքը. Ահաւասիկ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կենդանիների կեանքի տևողութեան մասին։ Արջը և գայլը 20 տարուց աւելի չեն ապրում։ Աղուէսը 10-ից մինչև 14 տարու է հասնում։ Լոնդոնի կենդանաբանական այգու մէջ առիւծներ են տեսնուած, որ 60 տարեկան են եղած։ Սկիւռները և ճագարները 8 տարի են ապրում։ Հաստատում են, թէ 400 տարի ապրող փղեր կան։ Երբ Ալէքսանդր Մեծը յաղթեց Պորիւսին, հնդիկ արքային, արևին նուիրեց այս կենդանիներից մէկը, որ արիաբար մաքառել էր և որի անունը Այաքս էր դրել։ Ազատ թողեց նրան, վրան որոշ նշան գնելուց յետոյ։ Արդ երեք հարիւր յիսուն տարուց յետոյ այս կենդանին գտնուեցաւ։ Ռնգեղջիւրները 22 տարի են միայն ապրում. փասիանը և հաւը 12 տարուց չեն անցնում. կէտ ձուկը 1000 տարի է ապրում. դելփինները և թրաձկները՝ 30 տարի. խոզերը 8 10։ Թութակները շատ են ապրում։ Ֆլորենցիայում տեսել են այս թռչուններից մէկը, որ 110 տարի է ապրել և երեք սերունդ շարունակ գտնուել է միևնոյն ընտանիքի մէջ։ Այծը և ոչխարը 15 տարուց չեն անցնում. հաւալուսները մինչև 100 տարի են ապրում։ Եզները հազիւ 35 տարի կարող են ապրել, ձին 35 տարուց չի անցնում. 20-ից 25 տարի ապրող շուն հազիւ կգտնուի։ Վիեննայում մի արծիւ սատկել է 103 տարեկան։ Եկքանիկն ու ծիտը 25 տարի են ապրում։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ «ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

—

ՑԱՐՍԿՈՅԵ-ՍԵԼՕ, 23 ապրիլ.—Թագաւոր Կայսրին և Թագուհի Կայսրուհուն Ալէքսանդրեան պալատում ներկայացաւ չինաց արտակարգ դեսպանութիւնը Լի-Հունգ-Չանգի գլխաւորութեամբ։ Ունկնդրութեանը դեսպանը յանձնեց Կայսրին հաւատարմական թղթերը և մատոյց «կրկնակի վիշապի» շքանշանի ադամանդազարդ նշանները։ Թագուհի Կայսրուհուն ներկայանալուց հետոյ դահլիճ ներս տարան դեսպանութեան անդամներին։ Դեսպանը նրանց ներկայացրեց Նոյին Մեծութիւններին։

ՊԱՐԻԶ.—Քաղաքային ընտրութիւններին Պարիզում ընտրուած են. 8 հանրապետական-առաջադիմականներ, 11 պահպանողականներ, 20 ընկերվարականներ և 15 արմատականներ։ Դեռ 26 կրկնաքուէարկութիւն պէտք է լինի։ Նոր խորհրդի կազմակերպութիւնը նախորդին նման է։ Նահանգներում ընտրութիւնները խաղաղ անցան։

ՊՈՏՍԴԱՄ.—Կայսրը բուլղարական իշխանին շնորհեց «Կարմիր արծուի» շքանշանի մեծ խաչն ու շղթան. բուլղարական մինիստրներին, Ստոյլովին և Պետրովին—«Թագի» շքանշանի I աստիճանը։ Իշխան Ֆերդինանդը մեկնեց Կոբուրգ։

ՄԱՍՍՈՎԱ.—Ապրիլի 20-ի պատերազմի մէջ երկու տեղական գումարտակները զօրեղ դիրք գրաւեցին, ապրիլի 21-ին զօրաբաժինը բանակեց Դոնգոլա սարի դիմացը։ Թշնամին մեծ ընդդիմութիւն ցոյց չտուեց։

ՎԵՆՆԱ.—Ապրիլի 21-ին չէրնոգորիական իշխանը Բադէն-Բադէն մեկնեց։

ՀՌՈՄ.—Մասսովայից հաղորդում են. «Սենաֆէում կեդրոնացած իտալական պատերազմական զօրաբաժինը երեք բաժիններով թշնամու վրայ գնաց։ Առաջին բաժինն ուղղակի Ադիգրատ է գնում, երկրորդը Ադիգի վրայ է յարձակւում, երրորդը օգնում է առաջինի արշաւանքին։ Թշնամին իր ուժերը կեդրոնացրել է Փոկալա սարի վրայ, որտեղից ճանապարհ է անցնում դէպի Ադիգրատ։

ԹԵՀՐԱՆ.—Մուզաֆֆար-Էդդինը գահ բարձրացաւ Թաւրիզում։ Նասր-Էդդինի մարմինը զմռսած է։ Այն հրամանը, որով շահը պետական գործերի ժամանակաւոր կառավարութիւնը յանձնեց մեծ վեզիրին, հաղորդուեցաւ պրինցներին, մինիստրներին և այլ պաշտօնատար անձերին։

Մուզաֆֆար-Էդդինի գահ բարձրանալը գլխաւոր մզկիթում յայտարարեց կրօնապետը, որից յետոյ պրինցները, նահանգապետները և մինիստրները իրենց հաւատարիմ հպատակութեան զգացմունքները յայտնեցին նոր շահին, որն ամենաողորմածաբար խօսեց ամենքի, նամանաւանդ առանձնապէս Նասր-Էդդինի աւագ որդի Մասուդա-Միրզային (Զիլլի-Սուլթանի) հետ։

ԼՈՆԴՈՆ.—«Times»-ին հաղորդում են, որ նոր շահը մայրաքաղաք կժամանի տասն օրից յետոյ։

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

—

«Նոր-Դար»-ի հրատարակման օրից՝ յայտարարութեան իւրաքանչիւր բառի վճարը՝ 2 կոպէկ է հաշւում, առաջին երեսում՝ եռապատիկը։

Մահացուցակի վճարը յայտարարութեան բաժնում՝ 3 րուբլի է, իսկ առաջին երեսում 6 ր.։

Ռուսիայում տարեկան բաժանորդագինն 10 ր. է, Ռուսիայից դուրս՝ 40 ֆրանկ. Ամերիկայի համար 8 դոլար։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՃԱՆՃԻ ԴԵՂ
ՄՈՍԿՈՒԱՅԻ Ռ. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿ.
գործարանի
ծախուէ կայ
ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ
աւելի նշանաւոր վաճառականների մօտ։ Ամենաէժան, իսկական, մաքուր և կատարելապէս անվնաս միջոց ճանճերի դէմ։
(M.) 3—1

Բարձր դասակարգի կանայք, ինչպէս և գեղեցկութեամբ անուանշանաւոր գերասանուհիները հրաժարուեցին գործածել ԿՕԼԴ-ԿՐԵՄԸ (Cold-Créme), որ դառնահամ է իւղալի տեսք է տալիս դէմքին. Դրա տեղ նրանք գործ են ածում CREME-SIMON (Կրեմ-Սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող պատրաստութիւնը, որ երբէք չէ փչանում և սնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի չնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։
LA POUDRE SIMON (Պուդր Սիմոն) LE SAVON ALA CREME SIMON (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները։
I. SIMON., 13 rue Grande Bateiére, PARIS Մաս-մաս վաճառւում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։
(M.) 15—15

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
SANTAL MIDY
Պարիզի դեղագործի պատրաստած, թոյլատրուած է Ռուսիայում։
Նոր կապսիւլների մէջ պարունակւում են մաքուր սանտալի էսսէնցիա։
Պահւում է Ռուսիայի գլխաւոր դեղատներում։
(M.) 33—4

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ՄԱՏԻԿՕ
(Injection au Matico)

Թոյլատրուած է Ռուսիայում
Պատրաստուած է Մատիկօ տերևներից՝ պերուվիների բոյսի։
Պահւում է Պարիզում
Prue Vivienne, Paris
(M). 15—7

АЛЬДЕХИДЪ ВЛАДІО
КРЕМЪ
Главны складъ въ Москвѣ.
Г. В. Кремеръ, Чижовское подвор.
Կաշին և դէմքը փափկացնելու համար
Малый флак. 60 к.
Больш. флак. 1 р.
МОЖНО ПОЛУЧАТЬ ВЕЗДѢ.
(М) 32—7

ТРЕБУЮТСЯ АГЕНТЫ для продажи выигрышныхъ билетовъ съ разсрочкой платежа и страхованію
Прос. адрес. банкирской конторѣ
СПБ. И. А. ШИФЪ, Гороховая, 13.
(М) 15—12.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ, ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԱԾ,
„ՍՈՒՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
ազգային վակատար ԵՐԳԱՐԱՆԻ առաջին հատորը՝ չորրորդ տպագրութեամբ։ Գիրքը բաղկացած է 413 մեծադիր երեսներից և պարունակում է իւր մէջ բացի բոլոր գործածական և ժողովրդին յայտնի երգերից, նոյնպէս նոր երգեր, բանաստեղծութիւններ և երգերին վերաբերեալ՝ արձակ զրուածքներ, թւով 304։ Իւրաքանչիւր օրինակի գինն է, ճանապարհածախսով միասին, 1 ՐՈՒԲԼԻ 20 ԿՈՊԷԿ
Օտարաքաղաքացի ցանկացողները յայտնելով իրենց ճիշտ հասցէն, պէտք է դիմեն Բագու, «ՍՈՒՐԱԿԻ» հրատարակիչն, հետևեալ հասցէով՝
Священнику Григорію Григорянцу, ВЪ БАКУ.
(444) 3—2.

ГУСТАВЪ ШТЫРМЕРЪ
П—А—Л—Ь—М—И—Р—А
ВАРШАВА
20 коп.
50 коп.
ТРИ КУСКА
(M.) 50—3

Գործակալութիւնս յանձն կ'առնէ պատրաստել ապօրինի չէնքի և մեքենաներու ծրագիրներ նոր-դըլանական և հին քարի դրութեամբ։
Կըհայթայթենք ցամաքային մեքենաներ, ցորենի և հաճարի նորաձև աղօրիներու ամէն գործիները և կրասանձներ անոնց չինութիւնը։
Գործակալութիւնս իւր ծրագիրները խորհրդատու ճարտարապետներու քննադատութեան կրնայ յանձնել ի հարկին։
[illegible]
ԴԻՄԵԼ
H. Pashaian et Courian, 12 Croydon Grove 12, West Croydon, London. 50—12

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“
անընդհատ և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ երկու շաբաթը մի անգամ։
Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները։
Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, 1 (13) մայիսի «Սիրկասսի» շոգենաւը, նաւապետ՝ Բոշէլ։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները սովորական գինն ունին։
Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւններ ստանալու համար դիմել՝
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարվանս. Դէօրգ աղայի
Բագւում–պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։
(392) 20—5



ԼԻՍԿԱՏԵՐ ԾՐԱԳԻՐԸ — ՁՐԻ
(М. 10—6
ԱՌԱՋԱԿԱՐԳ հեծանիւների պահեստ
Ա. ԱՐԼՈՎՍԿՈՒ.
Улица Глинки, 3, С.-Петербургъ

Կատարելագործուած նորութիւն, առանց շղթայի	245 ր.
Ամենալաւ թեթևները,	210 ր.
Յատկապէս ճանապարհորդական գլմասկոնները	192 ր
Հանրամատչելի, յայտնի գործարանի սկսած	135 ր.
Մանկական (անիւմատիկի վրայ սկսած	85 ր.

ԲՈԼՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ
Նոյն տեղում պարապմունք է ընդունում պատկ. „САМОКАТЪ“ ամսագրի համար, 5 ր.։ Ծրագիրը

Тифлисъ Доз. цензурою 24-го Апрѣля 1896 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный д-мъ